



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք, գ Աշոցք
 հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
 հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
 էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2024 թվականի N 360 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՅՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 08-015-0064-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԿԱՌՈՒՑԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անդրանիկ Էդվարդի Բեգոյանը դիմել է (դիմումը մուտքագրված Աշոցքի համայնքապետարանում 2024 թվականի հոկտեմբերի 07-ին, մտից 1535) Աշոցքի համայնքի ղեկավարին Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում գտնվող, 08-015-0064-0006 կադաստրային ծածկագրով 0.098184 հա մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության անասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչելու խնդրանքով:

Ղեկավարվելով՝ «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ դրանք կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և որ հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, **որոշում եմ.**

1. Ճանաչել քաղաքացի Անդրանիկ Էդվարդի Բեգոյանի /ծնված՝ 1977 թականի մարտի 08-ին/ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղում գտնվող, 08-015-0064-0006 կադաստրային ծածկագրով 0.098184 հեկտար մակերեսով հողամասի և հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության ընդհանուր 61,25 քառաքուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքի նկատմամբ:
2. Քաղաքացի Անդրանիկ Էդվարդի Բեգոյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղ

Աշոցք 3-րդ փողոց, անասնաշենք 36 հասցեում գտնվող 08-0064-0006 կադաստրային ծածկագրով բնակելի նշանակության անասնաշենքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 3-րդ փողոց, անասնաշենք 36:

3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**



2024 թվականի հոկտեմբերի 08
գյուղ Աշոցք